Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 011303303, 010461841
info@samc.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ 4/04-338 30. 06. 2023թ.

«ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ն.ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/3-1 պայմանագրի միակողմանի մասնակի լուծման մասին

Հարգելի՛ տիկին Կաչյանց,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ում /այսուհետ՝ բժշկական կենտրոն/ հերթական համաճարակաբանական և մանրէաբանական հետազոտության արդյունքում բժշկական կենտրոնի և Ձեր ընկերության միջև 2023 թվականի հունվարի 10-ին կնքված հ.ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/3-1 պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ շրջանակներում մատակարարված «Бриллиантовая сестричка 2» ֆիրմային անվանումով հեղուկ օճառի /այսուհետ՝ Հեղուկ օճառ/ թվով երկու նմուշի մեջ հայտնաբերվել է Enterobacter մանրէ: Նշված Հեղուկ օճառը չի համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրին՝ հանդիսանալով կրկնակի վարակի աղբյուր ձեռքերի հիգիենիկ մշակման ընթացքում, ինչը խիստ անթույլատելի է բժշկական հաստատություններում՝ հաշվի առնելով վերջինիս կիրառման ոլորտը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացում ենք, որ Բժշկական կենտրոնը «Бриллиантовая сестричка 2» ֆիրմային անվանումով հեղուկ օճառի մասով միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Գնումների մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը: Իսկ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4- հ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 31-րդ կետի 17-րդ ենթակետի «դ» կետի համաձայն՝ կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ

չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ եթե Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան, այն է 30.06.2023թ., հաջորդող տասն օրվա ընթացքում /մինչև 10.07.2023թ./ սահմանված կարգով կատարեք որակավորման և պայմանագրի ապահովումների վճարումները, ապա Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի կատարման գումարը կազմում է 350,000.0 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, իսկ որակավորման ապահովման գումարը՝ 525,000.0 /հինգ հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:

Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Պատվիրատուի 1570053952390100 հաշվեհամարին և վճարման կտրոնները ներկայացնել Պատվիրատուի գնումների բաժին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՅԱՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
"СУРБ АСТВАЦАМАЙР" МЕД. ЦЕНТР
"SOURB ASTVATSAMAYR" MEDICAL CENTER
02235034

Կատարող՝ Ա. Հասչատրյան
Գնումների բաժին
Հեռ.՝ 010-461-740, 011-303-303-/26/